ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ-	053101.00.6 ՔԻՄԻԱ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ-	053101.02.6 ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ-	ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԲԱԿԱԼԱՎՐ

ՎԱՆԱՁՈՐ 2022

1. **Մասնագիտության թվանիշը և անվանումը**	053101.00.6 Քիմիա
2. **Կրթական ծրագրի թվանիշը և անվանումը**	053101.02.6 Դեղագործական քիմիա
3. **Շնորհվող որակավորումը**	Դեղագործական քիմիա
4. **Կրեդիտների քանակը**	240
5. **Ուսումնառության լեզուն**	Հայերեն
6. **Ուսուցման ձևը**	Առկա
7. **Ուսումնառության ժամկետը**	2018-2022թթ.

8. **Կրթական ծրագրի ընդունելության պահանջները**

Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները
Ընդունելությունը կատարվում է համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ», ՀՀ կառավարության որոշման (26 ապրիլի 2012 թվականի N 597 –Ն):
Ընդունելության համար դիմորդը հանձնում է ընդունելության քննություններ հետևյալ առարկաներից՝
«Քիմիա» -պարտադիր
«Կենսաբանություն» կամ «Ֆիզիկա» -կամընտրական

9. **Կրթական ծրագրի նպատակները**

Ծրագիրը նպատակաուղղված է դեղագործական քիմիայի բնագավառում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստմանը՝ կրթության, գիտության, ինչպես նաև այլ բնագավառներում աշխատանքային գործունեության համար:

- Դեղագործական քիմիայի բնագավառում մեթոդաբանական և տեսական հիմքերի խորացված ուսումնասիրության կազմակերպում,
- ինքնուրույն գործնական և գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորում, այդ բնագավառում գիտականորեն հիմնավորված գիտահետազոտական աշխատանքի ժամանակակից տեխնոլոգիաների յուրացում,
- շրջանավարտների մոտ ինքնաքննադատության, ինքնակրթության, ինքնազարգացման անհրաժեշտության ձևավորում:

10. **Կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքները**

«Դեղագործական քիմիա» մասնագիտության կրթական ծրագրի յուրացման վերջնարդյունքները որոշվում են շրջանավարտի կողմից ձեռք բերվող կոմպետենցիաներով՝ մասնագիտական գործունեության խնդիրների լուծմանն ուղղված նրա գիտելիքների, կարողությունների և անձնային որակների համալիրով.

<u>ա. Գիտենա</u>՝

- Դեղագործական Քիմիայի օրինաչափությունների ուսումնասիրման ընդհանուր մեթոդաբանությունը,
- Դեղագործական քիմիայի հասկացողությունների գիտականորեն հիմնավորված բացատրությունները,
- Քիմիայի ուսուցման գործընթացի մեթոդներն և մեթոդիկան,
- Ժամանակակից Դեղագործական քիմիայի հիմնական սկզբունքները և հայեցակարգերը,
- մարդու և շրջակա միջավայրի փոխհարաբերությունները կարգավորող նորմերը:

Բ. Կարողանա՝

- Կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության և գիտության բնագավառի օրենքների, բազային կրթության հիմնական դրույթների վրա,
- կատարել դեղագործական-քիմիական օբյեկտների և երևույթների գիտականորեն հիմնավորված ուսումնասիրություն,
- կատարել հիմնավորված եզրահանգումներ քիմիական երևույթների, օրինաչափությունների, օրենքների մասին,
- մեկնաբանել քիմիական, քիմիական-դեղագործական երևույթների միջև պատճառահետևանքային կապերը:

գ.. Տիրապետի՝

- դեղագործակա-քիմիական օբյեկտների ուսումնասիրման փորձարարական մեթոդներին,
- հետազոտությունների պլանավորման և կազմակերպման մեթոդներին,
- Դեղագործական քիմիայի ոլորտում տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման մեթոդներին,
- Քիմիայի, դեղագործական քիմիայի հիմնական բաժինների, թեմաների վերլուծության անհրաժեշտ մեթոդների ընտրությանը,
- հոգեբանա-մանակվարժական ու մեթոդական խնդիրների լուծման մեթոդներին:

11. **Կրթական ծրագրի ուսումնական պլանը**

Կցվում է

12. **Գնահատման ձևերը**

Գնահատման մեթոդներ և չափանիշներ
ա)գնահատման մեթոդներ
Ռեֆերատ, Էսսե, Զեկույց,Թեստ, Գործարար խաղեր /ակտիվ մասնակցություն/, Կլոր սեղան /ակտիվ մասնակցություն/, Կոնկրետ իրավիճակների վերլուծութ յուն, Նախագծերի մեթոդ, Հարցի նախապատրաստման մոդել, Ինքնուրույն աշխատանք համացանցում, Աշխատանքային տետրի վարում, Կուրսային աշխատանք, Հարցազրույց, Ստուգողական աշխատանք,
բ)գնահատման չափանիշներ
ՎՊՀ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:
Բակալավրիատի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին:
Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում.

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան,
- ինքնուրույն կատարվող աշխատանքներ,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցություն,
- նրա կողմից դրսևորած ակտիվությունը, հմտությունները և կարողությունները,
- ընթացիկ և ամփոփիչ քննություններ կամ ստուգումներ:

13. **Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները**

Մասնագիտական գործունեության ոլորտներ
053101.02.6 «Դեղագործական քիմիա» մասնագիտությամբ բակալավրը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները.

- Դեղագործական արտադրություններում՝ որպես տեխնոլոգ- քիմիկոս,
- Դեղատներում՝ որպես քիմիկոս-տեխնոլոգ, քիմիկոս-անալիտիկ, քիմիկոս-ֆարմակոգնոստ,
- Գիտահետազոտական լաբորատորիաներում՝ հետազոտող քիմիկոս, լաբորանտ,
- Դեղատներում՝որպես դեղագործության շուկայագիտության և կառավարման

մասնագետ,

- Դեղագործական հաստատություններում՝ որպես դեղամիջոցների պահպանման և որակի հսկման մասնագետ:

ՀՀ օրենսդրությամբ և գերատեսչական փաստաթղթերով նախատեսված կենսաբանական ուղղվածություն ունեցող կառույցներ,

Հետագա ուսման հնարավորությունները

Դեղագործական քիմիայի բակալավրի մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- Համապատասխան ժամկետներում՝ ստանալու բակալավրի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
- Մագիստրատուրայում՝ ստանալու դեղագործական քիմիայի մագիստրոսի աստիճան,

Մագիստրատուրայում՝ ստանալու այլ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճան:

14. **Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը**

Բակալավրերի պատրաստման հիմնական կրթական ծրագրեր իրականացնելու համար ՎՊՀ-ն ունի նյութատեխնիկական բազա՝ ապահովելու համար սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստվածությունը, լաբորատոր , գործնական և գիտահետազոտական աշխատանքները:

Բակալավրական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկը իր մեջ ընդգրկում է `

- տեսալսողական կաբինետներ,
- ուսումնական լսարաններ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով,
- համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգեր մտնելու հնարավորությամբ,
- մասնագիտությանը համապատասխան հատուկ կահավորված լաբորատորիաներ,
- ուսումնամեթոդական կաբինետներ:

15. **Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս**

ՀՀ Կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 714 - Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակ»: